«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«05» 06 2014թ.

Հաստատում եմ

Գնումների աջակցման կենտրոնի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

Հ. Թունյան

N ԳԲԽ-17/14 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ի կողմից 19.05.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ նաև Կենտրոն) ներկայացված բողոքով «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 17.03.2014թ. ժամը 12:10-ին ուղարկվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/4» ծածկագրով դեղորայքի

գնման ընթացակարգի էլեկտրոնային հրավեր, որը պետք է տեղի ունենար 27.03.2014թ. ժամը 11:00-ին, սակայն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 20.03.2014թ. ժամը 11:53-ին ստացվել է ծանուցում հրավերի փոփոխության մասին, որի համաձայն՝ մրցույթը տեղափոխվում է 03.04.2014թ. ժամը 11:00-ին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/4» ծածկագրով 03.04.2014թ. ընթացակարգի էլեկտրոնային հայտում որևէ փաստաթուղթ ներբեռնված չի եղել, ուստի «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ն հնարավորություն չի ունեցել մասնակցելու նշված ընթացակարգին:

Ընկերությունն իր էլեկտրոնային հասցեից 03.04.2014թ. ժամը 09:26-ին armeps համակարգի միջոցով, որը սպասարկվում է Կենտրոնի կողմից, օրենքով սահմանված կարգով ուղարկվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/4» ծածկագրով «Դեղորայքի» գնման հրավերի գնային առաջարկ:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 30.04.2014թ.՝ 27 օրացուցային օր հետո, ժամը 9:41-ին, Ընկերության էլեկտրոնային հասցեին ուղարկվել է արձանագրություն այն մասին, որ 03.04.2014թ. ժամը 11:00-ին ՀՀ պաշտպանության նախարարությունում կայացած էլեկտրոնային մրցույթին «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ի էլեկտրոնային հայտում որևէ փաստաթուղթ ներբեռնված չի եղել, ուստի և մրցութային հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել գնահատելու Ընկերության առաջարկները: Ընկերությունը գտնում է, որ վերջինիս հնարավորություն չի տրվել մասնակցելու մրցույթին, քանի որ այն ընդգրկվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների ցանկում:

Քանի որ ՀՀ պաշտպանության նախարարությունից էլեկտրոնային փոստով ուղարկված արձանագրության մեջ նշվում է, որ «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ի կողմից ուղարկված էլեկտրոնային հայտում որևէ փաստաթուղթ ներբեռնված չէ, ուստի Ընկերությունը բողոքը քննող հանձնաժողովին խնդրում է կասեցնել մրցույթի հետագա ընթացքը՝ նշելով, որ խախտվել է վերջինիս գնման ընթացակարգին մասնակցելու իրավունքը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետը:

Կենտրոնին՝ նույն օրը ներկայացված N 4586-2 գրությամբ, Ընկերությունը խնդրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/4» ծածկագրով ընթացակարգը 3, 5, 11, 12, 13, 14, 15, 16, 18, 19, 24, 25, 26, 27, 28, 30, 31, 32, 33, 35, 36, 37, 38, 39, 41, 42, 43, 47, 48, 49, 56, 57, 58, 60, 61, 62, 68 չափաբաժինների մասով համարել չկայացած և հրավիրել նոր մրցույթ:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 19.05.2014թ. N 04/032-966 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով կարծիք տալ Կենտրոնում 19.05.2014թ. «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.06.2014թ. N ԴՎԱ/1391 գրությամբ «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից www.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգով կազմակերպված դեղորայքի գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել 15 տնտեսական օպերատոր, այդ թվում՝ «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ն, որի հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի, սակայն հայտի գնահատման ժամանակ պարզվել է, որ ներկայացված էլեկտրոնային հայտին որևէ փաստաթուղթ կցված (ներբեռնված) չի եղել, և հանձնաժողովը դրանք գնահատելու հնարավորություն չի ունեցել:

3. ԳԲԽ-17/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-17/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ի կողմից 19.05.2014թ. ներկայացված բողոքը և նույն օրը ներկայացված N 4586-2 գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգով պայմանագրեր կնքելու մասին որոշման հայտարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին ներկայացրած 02.06.2014թ. N ԴՎԱ/1391 գրությունը, հայտնում է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակեպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-

9/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ն 19.05.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ 03.04.2014թ. ժամը 09:26-ին «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ի էլեկտրոնային հասցեից armeps համակարգի միջոցով ուղարկել է իր գնային առաջարկը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 30.04.2014թ.՝ 27 օրացուցային օր հետո, ժամը 9:41-ին, Ընկերության էլեկտրոնային հասցեին ուղարկվել է արձանագրություն այն մասին, որ 03.04.2014թ. ժամը 11:00-ին ՀՀ պաշտպանության նախարարությունում կայացած էլեկտրոնային մրցույթին Ընկերության էլեկտրոնային հայտում որևէ փաստաթուղթ ներբեռնված չի եղել, ուստի և մրցութային հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել գնահատելու Ընկերության առաջարկները:

Ընկերության պնդմամբ՝ վերջինիս հնարավորություն չի տրվել մասնակցելու մրցույթին, քանի որ այն ընդգրկվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների ցանկում:

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ն գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները:

Բողոքը քննող հանձնաժողովին Ընկերությունը խնդրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/4» ծածկագրով ընթացակարգը 3, 5, 11, 12, 13, 14, 15, 16, 18, 19, 24, 25, 26, 27, 28, 30, 31, 32, 33, 35, 36, 37, 38, 39, 41, 42, 43, 47, 48, 49, 56, 57, 58, 60, 61, 62, 68 չափաբաժինների մասով համարել չկայացած և հրավիրել նոր մրցույթ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.06.2014թ. Կենտրոնին ներկայացրած N ԴՎԱ/1391 գրությամբ հայտնել է, որ վերջինիս կողմից armeps էլեկտրոնային գնումների համակարգով կազմակերպված դեղորայքի գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել 15 մասնակից, այդ թվում՝ «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ն, որի հայտը armeps համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի, սակայն հայտի գնահատման ժամանակ պարզվել է, որ ներկայացված էլեկտրոնային հայտին որևէ փաստաթուղթ կցված (ներբեռնված) չի եղել, և հանձնաժողովը դրանք գնահատելու հնարավորություն չի ունեցել:

Կենտրոնում 05.06.2014թ. ժամը 11:30-ին կայացած բողոքը քննող հանձնաժողովի նիստի ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչը «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ի ներկայացուցչի ներկայությամբ բացեց Ընկերության կողմից ներկայացված հայտը: Նշված էլեկտրոնային հայտերի ուսումնասիրության արդյունքում

պարզվեց, որ Ընկերության՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով պահանջվող դիմումը և գնային առաջարկն առկա չեն, ինչի արդյունքում վերջինիս հայտը մերժվել է:

Միաժամանակ, այլընտրանքային կերպով բացվեցին նաև Ընթացակարգին մասնակցող այլ կազմակերպությունների հայտեր, որոնք ներառում էին հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Բողոքը քննող հանձնաժողովի այն հարցին, թե Ընկերության հայտը մերժելիս Պատվիրատուն թույլ է տվել որևէ ոչ իրավաչափ գործողություն կամ անգործություն, Ընկերության ներկայացուցիչն ընդունեց, որ թե՛ պատվիրատուի և թե՛ գնահատող հանձնաժողովի կողմից որևէ ոչ իրավաչափ գործողություն կամ անգործություն թույլ չի տրվել:

Կենտրոնը 05.06.2014թ. N 09/032-1008 գրությամբ դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը, որն ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ համակարգը չի կարողացել գաղտնազերծել փաթեթը, ինչը նշանակում է, որ այն լիարժեք չի եղել: Միաժամանակ, ընկերությունը տեղեկացրել է, որ հայտերը պատրաստվում են օգտագործողի մեքենայի վրա և դրանց պարունակությունը հասանելի է դառնում մրցույթի բացումից հետո:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 05.12.2013թ. N 1370-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի՝

- 20-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամն իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացնում բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատում է իրեն ներկայացված հայտերի ցուցակը:
- 21-րդ կետի համաձայն՝ գնահատման գործընթացը կատարվում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

Գտնում ենք, որ «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ի հայտը մերժելով գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և թույլ չի տվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը 3, 5, 11, 12, 13, 14, 15, 16, 18, 19, 24, 25, 26, 27, 28, 30, 31, 32, 33, 35, 36, 37, 38, 39, 41, 42, 43, 47, 48, 49, 56, 57, 58, 60, 61, 62, 68 չափաբաժինների մասով չկայացած համարելու և նոր ընթացակարգ հրավիրելու պահանջներով «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ի կողմից 19.05.2014թ. Գնումների աջակցման կենտրոն ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքն անհիմն է և առաջարկում ենք մերժել այն:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Է. Սարգսյան

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-17/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար Լ. Եղիազարյան